ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Հաշվի առնելով, որ «Դաննիկ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա է բավարարման, ուստի նման պայմաններում Դատարանը գտնում է կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանվի մինչև վճռի կատարումը:

7. Դատական ծախսերը

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, **234.12**-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Դաննիկ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի՝ «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-2» ծածկագրով 09.01.2023 թվականին կնքված «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի 20.07.2023 թվականի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/1-2» ծածկագրով 09.01.2023 թվականին կնքված «Երևանի կենդանաբանակ այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի 20.07.2023 թվականի միակողմանի լուծումը:

3. Դատարանի 08.08.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոց պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

6. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՇԻԼԱՋՅԱՆ